ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԼՈՒՅՍ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Սամսոնյան.

Ի պատասխան Ձեր 24.10.2018թ. հ. Ե-3/07 գրության՝ տեղեկացվում է.

Սիսակյան փողոցի հ.3 հասցեի հողամասը, որը գտնվում է Վշտունի փողոցի 1-ին նրբանցքի և Սիսակյան փողոցի խաչմերուկին հարող տարածքում, նախկինում կառուցապատված է եղել 5 հարկանի բազմաբնակարան բնակելի շենքով, որը 4-րդ կարգի վթարային լինելու պատճառով ապամոնտաժվել է:

Երևան քաղաքում առկա 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու ծրագրի շրջանակում, ս.թ. հունվարի 25-ին Երևանի քաղաքապետարանի և «ԻՆԺ ԳԱՐԱՆՏ» ՍՊ ընկերության միջև կնքվել է բնակարանների գնման պայմանագիր, որից հետո Երևանի քաղաքապետի 20.02.2018թ. հ.596-Ա որոշմամբ Սիսակյան փողոցի հ.3 հասցեի վթարային շենքի զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքի միջոցով տրամադրվել է «ԻՆԺ ԳԱՐԱՆՏ» ՍՊ ընկերությանը: Ծրագրի շրջանակում կառուցապատողին 12 հարկանի բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու նպատակով 19.06.2018թ. տրամադրվել է նախագծման թույլտվություն, 06.07.2018թ. համաձայնեցվել է համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպության և ՀՀ ԱԻՆ փորձաքննական եզրակացությամբ նախագիծը ու տրամադրվել է համապատասխան շինարարության թույլտվություն: Նշված տարածքում բարձրահարկ բնակելի շենքի կառուցման քաղաքաշինական ծրագիրը համապատասխանում է Երևանի քաղաքապետի 12.12.2007թ. հ.5410-Ա որոշմամբ հաստատված Աջափնյակ վարչական շրջանի գոտիավորման նախագծով (քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) ամրագրված գործառնական, կառուցապատման համար սահմանված դրույթներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ